ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/97

ք. Երևան « 7 » «նոյեմբերի» 2019թ.

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը», ի դեմս **Արթուր Սողոմոնյանի**, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ՀՈՎՀԱՎ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Հարությունյանի,** որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **«ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի Թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում՝ տանիքով»** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 **Պայմանագրով նախատեսված աշխատանքներն սկսվում են Կողմերի միջև կնքվող ֆինանսական միջոցների առկայության մասին լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 60 օր:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք՝ համաձայն Հավելված 6-ի.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **22,600,000 (քսաներկու միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 3,766,667 (երեք միլիոն յոթ հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն**: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ԿԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[33] :

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ԿԳ -ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[34] : Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ. ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն

[34] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն

պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1, N 5 և N 6 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	Հովզավ ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,	ք. Ջերմուկ, Շահումյան 11Ա
Կ.Ուլնեցու 31	Բանկը՝ ՎՏԲ Հայաստան Բանկ
ՀՎՀՀ՝00846441	Ջերմուկի մասնաճյուղ
Հ/Հ՝ 900018001231	Հ/Հ 16049004133400
Կենտրոնական գանձապետարան	ՀՎՀՀ 08909995
	Տնօրեն
Գործադիր տնօրեն	Ա. Հարությունյան
Արթուր Սողոմոնյան	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
«7» «նոյեմբերի» 2019 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/97 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ *
«ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի Թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում՝ տանիքով»
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

<<		Աշխատանքների և ծախսերի անվանումը	ՉՄ	Քանակ	հազար դրամ	
					Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6	7
		Տանիք				
1	1	Գոյություն ունեցող ազբոշիֆրե տանիքի ապամոնտաժում /ներառյալ ձեղնապատուհանը/	մ2	50	0.116	5.789
2	1	Շին.աղբի հավաքում բարձում ինքնաթափերի վրա ձեռքով և տեղափոխում 10կմ հեռավորության վրա	տ	5	7.127	35.635
3	1	Ձեղնապատուհանի տեղադրում, ցինկապատ թիթեղ 0,55մմ	հատ	1	33.281	33.281
4	1	Շերտափեղկ ի տեղադրում	մ3	0.03	610.378	18.311
5	1	Տանիքի փայտյա տարրերի տեղադրում	$մ^3$	1	268.911	268.911
6	1	Տանիքի ծածկույթի իրականացում ցինկապատ թիթեղից 0.55մմ ներառյալ կավարամածը/обрешетка/	$մ^2$	50	6.317	315.829
7	1	Գագաթնամասի պատրաստում թիթեղից δ=0.55մմ	$մ^2$	10.7	4.438	47.490
8	1	Անցքերի բացում Φ12 հեղյուսների և դյուբելների համար	հատ	20	0.309	6.175
9	1	Հեղյուսներ, M12x160 /80 հատ/	կգ	10	1.479	14.794
10	1	Կավարամածի եւ տախտակամածի մշակում հականեխիչ նյութով	$մ^2$	240.0	0.566	135.852
		Քանդման աշխատանքներ				
1	1	Մանրահատակի և փայտյա պատվածքի քանդում	մ2	30	0.618	18.525
2	1	Լինոլիումե հատակի քանդում	մ2	10	0.399	3.988
3	1	Փայտե պատուհանների ապամոնտաժում	մ2	46	2.290	105.336
4	1	Դռների ապամոնտաժում/26 հատ/	մ2	7.54	1.364	10.282
5	1	Պատերի ներկի մաքրում	մ2	298.64	0.296	88.365
6	1	Պատերի փայտե պատվածքի ապամոնտաժում	մ2	30	0.527	15.824
7	1	Հատակի ց/ա շերտի քանդում	մ2	100	0.309	30.875
8	1	Առաստաղի գաջի մաքրում,ծրատում	մ2	300	0.296	88.767
9	1	Գաջի սվաղի մասնակի քանդում /պատերի և առաստաղի 30տոկոս/	մ2	107.7	0.206	22.169
10	1	Շեպերի գաջե սվաղի քանդում	մ2	26	1.042	27.093
11	1	Առաստաղի ներկի մաքրում	մ2	160	0.399	63.810
12	1	Կուտակված ինվենտարի տեղափոխում	$մ^2$	5	3.962	19.812

13	1	Շին աղբի և ավելորդ գրունտի բարձում և տեղափոխում 13կմ հեռավորության վրա	տ	17	4.207	71.515
		Նորոգման աշխատանքներ				
1	1	Պատերի գաջե սվաղ բարձր որակի	մ2	582.0	2.534	1474.986
2	1	Պատերի գաջե սվաղ բսահարթում	մ2	749	0.939	703.401
3	1	Պատերի ներկում լատեքսային ներկով /ներառյալ ջրակայուն մածիկը/	մ2	450.0	2.431	1094.144
4	1	Պատերի ներկում յուղաներկ ներկով /ներառյալ ջրակայուն մածիկը/	մ2	450.0	1.981	891.522
5	1	Պատերի երեսապատում կերամիկական սալերով	մ2	7	8.105	56.733
6	1	Ներսի Պատերի ց/ա սվաղ բարձր որակի	մ2	87	2.972	258.541
7	1	Դրսի պատերի ց/ա սվաղ բարձր որակի	մ2	180	2.985	537.230
8	1	Պատերի լրացում 20սմ հաստությամբ պեմզաբլոկներով	մ3	23	40.498	931.455
9	1	Ե/բ միաձույլ բարավորների պատրաստում B15 դասի բետոնից	$մ^3$	2	78.024	156.049
10	1	Ամրան ∅6AI	տ	0.017	497.040	8.450
11	1	Ամրան ∅12A500C	տ	0.023	488.511	11.236
12	1	Անկյունակ 63x63x6մմ	մ	30.000	3.371	101.117
13	1	Պատերի ցոկոլային մասի երեսպատում չհղկված բազալտե սալերով/ 2 շար	մ2	36	19.786	712.292
14	1	Ամրան 12AIII	տ	0.55	488.511	268.681
15	1	Ամրան 6AI	տ	0.29	497.040	144.142
16	1	Շեպերի գաջե սվաղ	մ2	106	5.879	623.192
		Բացվածքներ				
1	1	Մետաղապլաստե շրջանակի իրականացում դռների համար Պրոֆիլ ՊՀ 100*50	գմ	95	4.747	450.972
		Հատակներ				
1	1	Հատակի ց/ա սվաղ հարթեցնող շերտ	մ2	460	1.865	858.075
2	1	Հատակներ կ/ս	մ2	34	8.748	297.432
3	1	Լամինատե հատակի իրականացում 8մմ հաստ ներառյալ շրիշակը և սպունգը	մ2	426	8.594	3660.882
		Առաստաղ				
1	1	Առաստաղի գաջե սվաղ	մ2	460	2.972	1367.000
2	1	Առաստաղի ներկում լատեքսաներկով	մ2	460.00	1.196	550.353
		Այլ աշխատանքներ				
1	1	Սանհանգույցների բաժանումը խցիկներով երկկողմանի մետաղապլաստով δ=16,6մմ	մ2	16.4	7.371	120.892
2	1	Մետաղապլաստե պրոֆիլ UW(մ)	գմ	48	0.566	27.170
3	1	Մետաղապլաստե պրոֆիլ CW(մ)	գմ	28.9	0.682	19.705
4	1	Մետաղական տարրերի տեղադրում	տ	0.13	687.361	89.357
5	1	Բռնակ	հատ	3	1.479	4.438
6	1	Օխանի	հատ	9	0.746	6.715
7	1	Մետաղական տարրերի ներկում Շանգամ	մ2	2	4.245	8.491
8	1	Օդափոխության ճաղավանդակ	հատ	2.00	2.972	5.943
		Դռների, պատուհանների տեղադրում				
1	1	Մետաղապլաստե դռների տեղադրում Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., հայկական պրոֆիլ	մ2	8	44.486	355.889
2	1	Մետաղապլաստե դռների տեղադրում/ապակե փաթեթով/ Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով, պրոֆիլ (արտերկիր)	մ2	52.34	47.445	2483.271
3	1	Պատուհանագոգերի տեղադրում 30սմ	գմ	96.6	3.473	335.537

		լայնությամբ սպիտակ				
4	1	Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ, բացվող	մ2	43.48	36.330	1579.624
5	1	Պատուհանների բարդ փականների տեղադրում	հատ	50	8.105	405.238
6	1	Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ, չբացվող	մ2	121.00	25.202	3049.435
		Էլ.լուսավորություն				
1	1	Կոթառների, ապամոնտաժում	հատ	5	0.129	0.643
2	1	Ակոսների պատրաստում հաղորդալարերի համար	գմ	160	0.682	109.093
3	1	Ակոսների փակում գաջե սվաղով	$մ^2$	18	2.136	38.440
4	1	Լուսավորության վահանակ 12 խմբային ավտոմատների համար/հարկային/	հատ	3	15.695	47.085
5	1	Ավտոմատ անջատիչ միաֆազ 25Ա	հատ	18	2.830	50.944
6	1	Ավտոմատ անջատիչ միաֆազ 32Ա	հատ	2	3.036	6.072
7	1	18LED լուսատու	հատ	20	10.575	211.496
8	1	22LED լուսատու	հատ	50	11.295	564.760
9	1	24LED լուսատու	հատ	32	12.788	409.200
10	1	Հաղորդալար ՊՊՎ փակ էլ.հաղորդման գծերի համար , 2x2,5մմ2	գմ	100	0.682	68.183
11	1	Հաղորդալար ՊՎ փակ էլ.հաղորդման գծերի համար, 3x2,5մմ2	գմ	60	0.913	54.803
12	1	Անջատիչ միասեղնակ	հատ	3	1.119	3.358
13	1	Անջատիչ երկսեղնակ	հատ	17	1.544	26.244
14	1	Անջատիչ հերմետիկ	հատ	2	1.762	3.525
15	1	Վարդակ փակ էլ. հաղորդման գծերի համար 16Ա հողանցման հպակով	հատ	27	2.007	54.186
16	1	Տուփեր էլ.մոնտաժային	հատ	35	0.515	18.011
17	1	Պոլիէթիլենային խողովակ Φ25	գմ	160	0.360	57.634
18	1	Ամրակ մալուխների ամրացման համար	հատ	100	0.296	29.589
19	1	Պաշտպանիչ անջատման սարք/դիֆերենցիալ ավտոմատ/	հատ	1	19.657	19.657
		Ջրամատակարարման ներքին ցանց				
1	1	Բետոնե շերտի քանդում h=100մմ	մ3	0.5	18.815	9.407
2	1	Պատերում անցքերի բացում D=50մմ	տեղ	0.5	3.059	1.530
3	1	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B7,5	մ3	1	38.096	38.096
4	1	Մետաղապլաստե խողովակի տեղադրում Φ25	գմ	4	3.130	12.520
5	1	Նույնը Φ20	գմ	15	2.972	44.576
6	1	Նույնը Φ15	գմ	6	2.874	17.244
7	1	Փական Φ25	հատ	1	6.304	6.304
8	1	Փական Φ20	հատ	2	5.043	10.086
9	1	Փական Φ15	հատ	2	4.863	9.726
10	1	Զտիչ Φ25մմ	հատ	1	12.090	12.090
11	1	Խոհանոցակոնքի տեղադրում	հատ	2	32.351	64.702
12	1	Մանկական լվացարանի տեղադրում	հատ	3	35.316	105.948
13	1	Խողովակների ճնավոր մասեր	հատ	10	0.741	7.410
14	1	Ճկախողովակների տեղադրում	հատ	6	2.110	12.659
15	1	Ջրընդունիչ ծորակ-	հատ	6	5.905	35.429

16	1	Խողովակների մեկուսացում հանքային բամբակով և այլումինե թերթով	մ3	0.1	42.711	4.271
17	1	Հին աղբի բարձում և տեղափոխում 13կմ	տ	1	4.046	4.046
18	1	Ցանցի փորձարկում	գմ	25.0	0.091	2.284
		Կոյուղու ներքին ցանց				
1	1	Բետոնե նախապատրաստական շերտի քանդում h=100մմ	մ3	0.9	18.815	16.933
2	1	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B7,5	մ3	0.9	38.096	34.287
3	1	Կոյուղու խողովակների ապամոնտաժում Φ110մմ տրամագծով	գմ	9	0.965	8.684
4	1	Նույնը Φ50մմ տրամագծով	գմ	2	0.929	1.858
5	1	Հոսակների տեղադ.	հատ	2	5.455	10.909
6	1	Նստակոնքի տեղադր. բաքով	հատ	3	26.231	78.693
7	1	Կոյուղու պոլիվինիլքլորիդային խողովակների մոնտաժում Φ110	գմ	17	3.654	62.111
8	1	Կոյուղու պոլիվինիլքլորիդային խողովակների մոնտաժում Φ50	գմ	8	2.419	19.348
9	1	Պլաստմասե ձևավոր մաս.	հատ	11	2.676	29.434
10	1	Սիֆոնների տեղադրում	հատ	8	2.097	16.776
11	1	Մաքրիչ Φ110	հատ	3	6.227	18.680
12	1	Ստուգիչ Φ110	հատ	2	5.493	10.986
13	1	Ստուգիչ Φ110	հատ	2	5.493	10.986
14	1	Թեքում 110 ∠= 135°	հատ	4	4.001	16.004
15	1	Ցանցի փորձարկում	գմ	25	0.399	9.970
		Ընդամենը				27614.926
		ԱԱՀ 20%				5522.985
		Ամբողջը				33137.911

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Հովզավ ՍՊԸ
ք. Ջերմուկ, Շահումյան 11Ա
Բանկը՝ ՎՏԲ Հայաստան Բանկ
Ջերմուկի մասնաճյուղ
Հ/Հ 16049004133400
ՀՎՀՀ 08909995
Տնօրեն
Ա. Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«7» «նոյեմբերի» 2019 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/97 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ր/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
2	**ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի Թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում՝ տանիքով**	*ժամկետի հաշվարկն կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած*	**60 օր**
ԸՆԴԱՄԵՆԸ			**60 օր**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Հովզավ ՍՊԸ
ք. Ջերմուկ, Շահումյան 11Ա
Բանկը՝ ՎՏԲ Հայաստան Բանկ
Ջերմուկի մասնաճյուղ
Հ/Հ 16049004133400
ՀՎՀՀ 08909995
Տնօրեն
Ա. Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 7 » «նոյեմբերի» 2019 թ. կնքված
ՀՏ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/97 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	45211228/507	շինարարական աշխատանքներ մանկապարտեզների համար	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

*****Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Հովզավ ՍՊԸ
ք. Ջերմուկ, Շահումյան 11Ա
Բանկը ՝ ՎՏԲ Հայաստան Բանկ
Ջերմուկի մասնաճյուղ
Հ/Հ 16049004133400
ՀՎՀՀ 08909995
Տնօրեն
Ա. Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
«7» «նոյեմբերի» 2019 թ. կնքված
ՀՄ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/97 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« 7 » «նոյեմբերի» 2019 թ. կնքված
***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/97** ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 5
«7» «նոյեմբերի» 2019 թ. կնքված
***ՀՄ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/97** ծածկագրով պայմանագրի*

Գծագրերը կից

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման
հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Հովզավ ՍՊԸ
ք. Ջերմուկ, Շահումյան 11Ա
Բանկը՝ ՎՏԲ Հայաստան Բանկ
Ջերմուկի մասնաճյուղ
Հ/Հ 16049004133400
ՀՎՀՀ 08909995
Տնօրեն
Ա. Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 6
« 7 » «նոյեմբերի» 2019 թ. կնքված
***ՀԾ-ԳՀ-ԱԾՁԲ-2019/97** ծածկագրով պայմանագրի*

Պատվիրատու
«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 90001800123

Կատարող

ԱԿՏ
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »_____ 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը **«ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի Թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում՝ տանիքով»** **աշխատանքներ**
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2019թ.
Պայմանագրի համարը՝ ***ՀԾ-ԳՀ-ԱԾՁԲ-2019/97***

Սույնով Պատվիրատուն և **ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնքը**, մի կողմից և Կատարողը, մյուս կողմից, հիմք ընդունելով թիվ ***ՀԾ-ԳՀ-ԱԾՁԲ-2019/97*** պայմանագրի **3.2.3** կետի պահանջները, կազմեցին սույն **ԱԿՏ-ը** հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում նախատեսված աշխատանքների կատարման համար Պատվիրատուն, **ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի** հետ համատեղ, հանձնում են, իսկ Կատարողն ընդունում է կողմերի միջև կնքված պայմանագրին կից Նախագծով նախատեսված տարածքը:

Տարածքը հանձնեց	Տարածքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան «4» նոյեմբերի 2019 թ.**

<<Հովզավ>> ՍՊԸ -ն , ի դեմս Ընկերության տնօրեն Արմեն Հարությունյանի /ՆՔ 008726796, տրվ. 20,06,2016թ, 035-ի կողմից /, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ **«ՀՄ-ԳՀ-ԱԾՁԲ-2019/96/97»** ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետևանքներին համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Բրեդիթ Ռեֆորթինգ>> ՓԲԸ (Կարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետևանքների են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

<<ՀՈՎԶԱՎ>> ՍՊԸ
ք. Ջերմուկ, Շահումյան 11Ա
Բանկը՝ ԿՏԲ Հայաստան Բանկ Ջերմուկի մասնաճյուղ
Հ/Հ 16049004133400
ՀՎՀՀ 08909995
Տնօրեն Ա. Հարությունյան

Կ.Տ

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ**

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ <<Հովզավ>> ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՎՏԲ Հայաստան Բանկ Ջերմուկի մ/ճ

6. Վճարողի հաշվի համարը՝ 16049004133400

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 08909995

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 00846441

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝Կենտրոնական գանձապետարան

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N)900018001231

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 2260000-երկու միլիոն երկու հարյուր վաթսուն հարյուր հազար

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ AMD , ՀՀ դրամ

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *պայմանագրի կատարման ապահովման համար*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ «ՀԾ-ԳՀ-ԱԾՁԲ-2019/96/97»

19. Վճարման պայմանները՝ ակցեպտավորված վճարում

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.S.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.S.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.S. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.S. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.